

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բանասիրական գիթությունների դոկտոր

ՊԵՅՈ ՅԱՎՈՐՈՎԻ «ՆԱՅԵՐԸ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Նայ եւ բուղար ժողովուրդները համարել ճանապարհ են անցել դարերի միջով: Նրանց հարաբերությունների պարամության մեջ, անշուշտ, կարելու են բոլոր՝ թե՛ ռազմաքաղաքական ու քննասական, թե՛ն հոգեւոր-մշակութային բնագավառները: Նամանման պարամական ճակարագիր ունեցող այս ժողովուրդների պարամությունը լի է ոչ միայն դարերի հոլովութեամբ իրականացած խաղաղ համագործակցության, այլեւ ընդհանուր թշնամու՝ օսմանյան բռնակալության դեմ մղված համարել հերոսական պայքարի փայլուն էջերով ու ողբերգական դրվագներով:

Քիչ չեն եղել թուրքերի դեմ մղած կռիվներում, մանավանդ բալկանյան պարերագմներում թուրքական լծից Բուղարիայի ազապագրության համար բուղարացիների հեպ կողք կողքի կռված հայ կամավորները. իրենց քաջութամբ ու փառքով պսակած հայորդիներից շարերն են արժանացել են բուղարական պերության շքանշանների ու մեդալների, այլ բարձրագույն պարգեւների. բավական է հիշել միայն Բուղարիայի ազգային հերոսի կոչմանն արժանացած գեներալ-մայոր Անդրանիկ Օզանյանի եւ «Արիության համար» շքանշանի ասպետ Գարեգին Նժդեհի անունները: Նայկական կամավորական վաշտի մարաական դրոշի վրա նույնպես դրոշմված էր «Արիության համար» շքանշանը:

Բայց այս շեղումը մեզ կարող է շար հեռու քանել, ուստի, կանգ առնենք մշակութային ու մանավանդ գրական երեւոյթների վրա, որոնք նույնպես ազգային նույն մարահոգութունների, ազապագրական նույն ձգպումների արաահայութիւններն են երկու եղբայրական ժողովուրդների գրականութիւնների մեջ:

Նայերիս միշտ էլ հոգեհարազապ է եղել բուղարական գրականութիւնը, հարկապես պոեզիան ու դրամապուրգիան, որոնց լավագույն նմուշները պարբերաբար թարգմանվել, անգամ բեմադրվել են հայերեն ու դարձել մեր ժողովրդի սեփականութիւնը: Խրիստո Բուրեի, Իվան Վազովի եւ մանավանդ Պեյո Յավորովի սպեղծագործութիւնները, անկախ այն բանից՝ բուղարակա՞ն կյանք են պարկերում թե՛ հայկական, կարծես մեր իսկ կենսագրության հարազապ արաացուքն են: Եւ անկախ այն բանից՝ գրականագիթութիւնն ինչպես է արժեւորել Պեյո Յավորով բանասպեղծին, ինչպես է գնահապել նրա սիմվոլիսարական պոեզիան, ազգային-հայրենասիրական կամ գյուղական կյանքն ու ապսարամքութիւնները պարկերող երգերը, հայ իրականութեան մեջ նա արդարացիորեն արժանացել է պաշաճ գնահապանքի. նրա անունով է կոչվում Երեւանի 131-րդ հանրակրթական դպրոցը, նրա «Վիպոշի փեշերին» պիեսը 1966-67 թթ. բեմադրել է Սունդուկյանի անվան ակադեմիական թապրոնը, ՆԽՄԾ ժողովրդական նկարիչ Գ. Ահարոնյանի սպեղծագործութիւնը՝ Սոֆիայում կանգնեցված «Պեյո Յավորով» հուշարձանն ունի «Երախապգետ հայ ժողովրդից» մա-

կագրությունը, իսկ Յավորովի բանաստեղծությունները եւ առավել շար՝ «Նայերը», հիշվում են մրավորականների մեծ ու փոքր հավաքներում, պաշտոնական հանդիսություններում արտասանվում են ներշնչումով ու անկեղծ ոգեւորությամբ:

Իր մղած գրեթե բոլոր մեծ պատերազմներում Թուրքան թեւ պարտվել է, սակայն գերպերությունների «բարեհաճությամբ» վերցրել է հաղթողի բաժին՝ ավելի սաստկացնելով հպարտ փոքրամասնությունների եւ մանավանդ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ հալածանքները: Նրան թեւ հաջողվեց ճնշել 1876 թ. բռնկված բուլղարական ապստամբությունը, բայց 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմում պարտվեց ու հարկադրված եղավ հրաժարվել Օսմանյան կայսրության ճիրաններում եղած որոշ տարածքներից: Ահա այդ իրադարձությունների պարույրսեւակյան բանաստեղծական բանաձեւը.

Արդեն օսմանյան կավե հսկայի

ճեղքն էր մեծանում,

Ու մեջքը՝ ճկվում

Բանականության տաքուկ շողերից.

Ռումին ու բուլղար, սլովակ ու սերբ

Պոկվել են նրա կավե կողերից...

Նույն աններելի մտքին է հակվում,

Նույն ախարով հիմա հայն է վարակվում...

Բեռլինի վեհաժողովում Նայկական հարցի հայրնի լուծումից քաջալերված՝ արյունաբու սուլթան Նամիդը 1894 - 96 թթ. կազմակերպեց զանգվածային առաջին մեծ ջարդերը. շուրջ 300.000 հայերի բնաջնջման հետեւանքով ուռճացավ գաղթականության ալիքը, եւ Արեւմտյան Նայաստանի հայաթափումն առավ աննախադեպ սոսկալի չափեր: Գաղթական հայերի մի մասն էլ ապաստան գտավ հյուրընկալ Բուլղարիայում ու արժանացավ բուլղար ժողովրդի բարյացակամ ու կարեկից վերաբերմունքին: Այսպէս էլ՝ իր հայրենիքում, Պեյո Յավորովը 1899 թվին ճանաչեց այդ հայրենագուրկ մարդկանց, խորությամբ ըմբռնեց նրանց անփարար վիշտը եւ անմիջական տպավորությամբ գրեց իր «Նայերը» խորագրով նշանավոր բանաստեղծությունը, որը նույն տարում թարգմանվեց ու հրատարակվեց նաեւ հայերեն:

Բնական եւ օրինաչափ էր այս բանաստեղծության ծնունդը. թե՛ Պեյո Սլավեյկոյին, թե՛ Դոբրի Չինարովին, թե՛ Խրիստո Բոպեին, թե՛ Իվան Վազովին եւ ուրիշների հաջողվել էր ստեղծել ազարագրական պայքարի բոցաշունչ ու բարձրարվեստ երգեր: Նամանման իրավիճակի թելադրանքով էին շուրջ մեկուկես տասնամյակ առաջ ստեղծվել նաեւ Մ. Պեշկոթաշլյանի «Զեյթունյան երգեր» եւ Ռ. Պարկանյանի՝ նույն ռուս-թուրքական պատերազմի շրջանում գրած «Ազար երգեր» բանաստեղծական շարքերը, որոնք քաղաքացիական բնաբերգության գլուխգործոցներ են: Նովի. Թումանյանի ասելով՝ «Ազար երգերով» Գամառ Բաթիպան, հենց որպէս ռազմերգու, դառնում էր «ահեղ եւ անմրցելի»:

Այսպիսով՝ թուրքական բռնապիրության դեմ ազարագրական պայքարի անհրաժեշտության գիտակցությունը, նույն կենսական հանգամանքները տարբեր ժողովուրդների

գրականությունների մեջ առաջ են բերել թեմայիկ - գաղափարական որոշակի ընդհանրություններ: Ակնհայտ փարբերություններն արտահայտվում են ազգային գեղարվեստական մրաժողության եւ բանաստեղծների անհատականության մակարդակներում:

Պեյո Յավորովն ինքն է գրել «Նայդուկի երգեր» երկմաս մի բանաստեղծություն, որն աչքի է ընկնում հայերիս համար անչափ հարազատ՝ ազգային ազատության համար պայքարի ելած ժողովրդի կամքի ու վճռականության, զոհաբերվելու, բայց բաղձալի նպատակն իրագործելու վճռականության ու հպարտության բարձրարվեստ պատկերմամբ: Այս բանաստեղծությանը 1890-ական թթ. վերջերին հավանաբար ծանոթ է եղել Երուսայում եղած եւ նույն խորագրով իր բանաստեղծական շարքը գրած Ավ. Իսահակյանը: Նայդուկի է նաեւ, որ Մակեդոնիայի ազատագրության համար իր ղեկավարած ջոկատով թուրք ջարդարարների դեմ կռվել է նաեւ նույն Պեյո Յավորովը եւ այդ իրադարձությունները գեղարվեստորեն պատկերել «Նայդուկային անուրջներ» (1908) հուշագրական երկում:

Փաստորեն հայոց Մեծ եղեռնը իրականում սկիզբ էր առել 1894-96 թթ., եւ Պ. Յավորովի «Նայերը» բանաստեղծությունն այդ ողբերգական իրադարձությունների օտարալեզու առաջին գեղարվեստական արձագանքն էր, ամենապապկորիչ ու ազդեցիկ մի ստեղծագործություն, որը հայերիս նկատմամբ անկեղծ սիրո ու մեր ողբերգության հանդեպ հարազատի կարեկցության արտահայտություն է:

Պ. Յավորովի «Նայդուկի երգերի», ինչպես նաեւ «Նայերը» բանաստեղծության լեզուն, սակայն, Ավ. Իսահակյանի «Նայդուկի երգերի» նման այնքան է ժողովրդական ու պարզ, եւ ոճը՝ այնքան հստակ ու մաքուր, որ բնավ չես կասկածի, թե այս բանաստեղծը երբեւէ սիմվոլիստական խորհրդավոր փեսիլների կամ Մեծարենցի ասած՝ «բառերու խաւարարարությունների» կողմնակից է եղել: Նշանակում է՝ այս դեպքում եւս նյութն է թելադրել ձեռք. երգը պարզ է ունենար առավելագույն մաքրություն, լիներ խոր ու պարզ, բայց ոչ պարզունակ: Ինչո՞վ կարող էր հպարտանալ բուլղարացի հայդուկը. ճիշտ ու ճիշտ իր այն արարքով ու սխրանքով, որ նպատակ ու հպարտություն էր նաեւ հայ հայդուկի համար:

Их на руже бы, любушка, право,

Тотчас менял я;

С ним бы на славу

турок стрелял я.-

«Նայդուկի երգը» այսպես է հնչում ռուսերեն թարգմանությամբ: Սա, իհարկե, դեռեւս այն մեծ խաբսումն ու ընդհանրացումը չէ, որ փեսնում ենք «Նայերը» բանաստեղծության մեջ:

1896 թ. ջարդերից հետո Բուլղարիայում հայրնված թափառական հայերի անհույս վիճակը բանաստեղծի վրա ունեցել է խոր ներգործություն: Ահա ինչու Պեյո Յավորովը «Նայերը» բանաստեղծությունը գրեց պանդուխտ ու հայրենազուրկ հայի ցավի ու փառապանքի խոր զգացողությամբ, նրա ցասման ու վրեժի այն ըմբռնումով, որ հարազատ է հենց թուրք բռնապիրության լծի տակ փառապած քրիստոնյա բուլղարացուն:

Այդ բանաստեղծությունը, գնահատելի շատ արժանիքների հետ միասին, հայերիս հա-

մար ունի առանձնակի արժեք: Նրա փողերում ու պարկերներում հայոց «արյունոտ անցյալի» եւ «անիծված ճակատագրի», ոսոխի կողմից բնաջնջվելու սպառնալիքի վկայակոչումներն են, հայության փառապանքի, հրդեհված հայրենի փների ու «սեւ անապատ» դարձած հայրենիքի պարկերումն է եւ դրանով իսկ՝ հայրենագուրկ ու թափառական հայի՝ վիշտը գինու մեջ խեղդելու բնական մղումի գեղարվեստական հիմնավորումը: Սակայն, մեր խորին համոզմամբ, անչափ կարեւոր ու բացառիկ է նաեւ հայ երգի պեյոյավորովյան ընկալումն ու մեկնաբանությունը:

Այդ երգը՝ որպէս խոսք ու մեղեդի, կարդալով զգում ու համոզվում ենք՝ բարձրանում է մարդկանց սրտից, խառնվում է բնության փառերքին, ազդում է նույնիսկ փոթորկի վրա եւ նրա թելերով փարածվում «բոլոր ծագերն աշխարհի»: Այդ երգի եւ այրող արցունքի մեջ բանաստեղծը փեսել է վրեժի եւ ըմբոսփության այն կայծակները, որոնք առասպելական թրեւի պէս շուրջով հայտնվելու էին հայ քաջերի ձեռքին՝ որպէս վրեժի եւ հափուցման առհավարչա::

«Նայերը» բանաստեղծությունը հայերեն մի շարք թարգմանությունների է արժանացել, որոնց զուգադրական քննությունը թարգմանական արվեստի խնդիր է. մինչդեռ մեզ այս պահին հետաքրքրում է բանաստեղծության բովանդակային խորքը, որը պիտի փորձենք ներկայացնել մեր համոզմամբ ամենից հաջողված՝ Նամո Սահյանի թարգմանության միջոցով՝ զուգահեռելով բուլղարերեն բնագիրն ու ռուսերեն թարգմանություններից մեկը:

Տասնմեկ եւ փասը վանկերով ութ փողանի վեց փուն, կանոնավոր հանգավորմամբ խիտ ու կուռ կառույց, որը ուրիշ լեզվով նույնությամբ վերարտադրելն ու պահպանելն անկարելի է առանց մեծ կորուստների: Այդ պարճառով էլ բանաստեղծությունը թե՛ ռուսերեն, թե՛ հայերեն թարգմանելիս պէտք է հաղթահարվելին որոշակի դժվարություններ՝ բովանդակային հարստությունն ու զգացմունքային համանվագը ճիշտ փոխանցելու համար: Երկու թարգմանություններում էլ չկան դարձվածների բառացի պարճենումներ, ազատ մոտեցումը հնարավոր է դարձրել չնչին շեղումներով բնագրի ոգուն հարազատության ապահովումը: Բայց եթե ռուսերեն թարգմանության մեջ (թարգմանիչ՝ Կ. Ջենկելիչ) հասկանալիորեն պահպանվել է փասնմեկ եւ փասը փողային շարակարգությունը, ապա դիտարկվող հայերեն թարգմանության փները կառուցված են բացառապէս փասներկու վանկանի փողերով: Դա, անշուշտ, թարգմանչի մեղքով չէ եւ իրականում թերություն էլ չէ, այլ հայերենի փաղաչափությանը բնորոշ յուրահատկություն ու թարգմանչի վարպետություն, որոնց համադրումով իրականացել է բանաստեղծության բովանդակության եւ էության բարձրարվեստ փոխանցումը:

Նիմա դժվար է ասել՝ Նամո Սահյանը անմիջաբար բնագրի՞ց է թարգմանել, թե՛ օգտագործել է նաեւ ռուսական թարգմանություններ: Նավանական են երկուսն էլ, որովհետեւ ռուսական բանաստեղծության, մանավանդ եսենինյան բարձրորակ թարգմանություններով հայտնի, ռուսերենին կապարելապէս փիրապետող Նամո Սահյանը չէր կարող անհաղորդ լինել ռուսերենին ցեղակից բուլղարերենին: Պարզ համեմատության համար բերում ենք միայն մեկական փուն բնագրից, ռուսերենից ու հայերենից՝ եզրակացությունը թողնելով ընթերցողին.

Բուլղարերեն.

Изгнанници клетки, отломки нищожна
Навинаги храбър народ мъченик
Дечица на майка робиня тревожна
И жертва на подвиг чутовно велик –
Далеч от родина, в край чужди събрани,
Изпити и бледни, порытен бордей,
Те пият, а тънат сърцата им в рани,
И пеят, тъй както през сълзи се пей.

Ռուսերեն.

Изгнанники, жалкий обломок ничтожный
Народа, который все муки постиг.
И дети отчизны, рабыни тревожной,
Чей жертвенный подвиг бесмерно велик.
В краю им чужом, от родного далеко,
В землянке, худые и бледные, пьют,
А сердце каждого ноет жестоко;
Поют они так, как сквозь слезы поют.

Իսկ հիմա՝ նույն տան հայերենը.

Տարագիրներ են նրանք, նրանք բեկորն են չնչին՝
Ոսիսներից հալածված քաջակորու մի ազգի,
Եւ զավակներն են զրկված՝ հայրենիքի իրենց հին,
Որ ողջակեզն է դարձել անօրինակ սխրանքի:
Նրանք՝ վրիպ, դալկահար, հեռու իրենց աշխարհից,
Օտար խուղի հարկի տակ խմում են ու երգ ասում.
Կծկվում են, կարկամում նրանց սրտերը ցավից,
Եւ նրանց երգը աղի արցունքի պես է հոսում:

Վերելում մեր մարմանշած «շեղումը» վերաբերում է ընդգծված վերջին տողին: Նկատելիք հավանաբար, որ բնագրում եւ Զենկովսկու ռուսերեն թարգմանության մեջ այս տողը բառացի հնչում է այսպես.

Երգում են նրանք այնպես,
կարծես արցունքի միջից են երգում:

Թարգմանություններից մեկում (Ս. Կապուտիկյան) այն հնչում է հենց այսպես.

... Եւ երգն արցունքի միջից է հոսում...

Ո՞ր թարգմանիչն է ճիշտ վարվել՝ մրաձելու խնդիր է. բայց պարզ է մի բան, որ հայի համար «արցունքի միջից» կամ «արցունքի միջով» երգելը նվազ հասկանալի է, քան երգի՝ աղի արցունքի պես հոսելը:

Եզրափակիչ տան մեջ Ն. Սահյանը թույլ է տվել մի այլ «շեղում» եւս, որը, սակայն, ավելի է ընդգծում բանաստեղծության ոգին: Բնագրում եւ ռուսերեն թարգմանության մեջ վերջին տողը կրկնվում է նույնությամբ, ինչպես Գյոթեի հանրահայտ «Վարդի» տների կրկնափոխությունը, մինչդեռ Սահյան թարգմանիչն այն դարձրել է՝

Նրանք այնպես են երգում, որ կարծես լաց են լինում:

Այսպիսի «շեղումները» թարգմանչին ներելի են, որովհետեւ նրանց նպատակն է բնագրի էությունը յուրազգի ընթերցողին հարազատորեն փոխանցելը եւ ոչ թե բառացի նմանակումը, որ կարող է բնագրից հեռացնել այնպես, ինչպես ռուսական **елки – палки** – ն պատճենում են *եղեւնիներ եւ փայտիկներ...*

Ասվածի լավագույն հիմնավորումը կլինի այն, որ մենք, առաջին տանն արդեն ծանոթ լինելով, առանց բանաստեղծությունը մասնատելու, նրա ընթերցումը շարունակենք երկրորդ տնից: Այդ դեպքում կհամոզվենք, որ Ն. Սահյանը բնագրի էությունն արտահայտել է այնպիսի հարազատությամբ, որ նախապես չիմացողը կարող է կարծել թե «Նայերը» նրա սեփական ստեղծագործությունն է.

Եւ խմում են, եւ երգում, որ հարբելով մոռանան

Իրենց անցյալն արյունոտ, ճակատագիրն անհիծված,

Մոռացություն է բերում գինին, թեկուզ մի վայրկյան,

Եւ ցավերն են մեղմանում կրծքերի տակ ծվարված:

Գլուխներն են մթազնում, մթազնում է ամեն ինչ,

Նայրենիքի տառապած կերպարանքն է չքանում:

Ու չի հասնում օգնության եւ աղերսի ոչ մի ճիչ

Զավակներին իր հարբած... Եւ մշուշն է խաբանում:

Ինչպես նախիրը քաղցած գազանների ոհմակից՝

նրանք փախել են, ցրվել աշխարհներում հեռավոր,

Եւ սպառնում է նրանց շառաչյունով զայրագին

Բնաջնջել հիմնովին ոսոխի թուրն ահավոր:

Սեւ անապատ են դարձրել նրանց հողը հոգեթով,

Նայրենի տունը նրանց հրդեհել են ու քանդել,

Եւ թափառում են նրանք երկրներկիր, ծովեծով,

Միայն պանդոկն է բացում իր դռները նրանց դեմ:
 Նրանք խմում են... Եւ նրանց մոլեգին երգն է ծորում,
 Արյունաքամ են լինում նրանց սրտերը կարծես,
 Խեղդում է վիշտը նրանց, վրեժի բոցն է այրում,
 Եւ հոսում են անդադար արցունքները աղեկեզ:
 Նրանց սրտերը ցասման կրակներով են լցված,
 Այրերն ի վար արցունքի այրող շիթեր են կաթում,
 Որտաի պես է թնդում գայրագին երգը նրանց,
 Եւ աչքերում վրեժի կայծակներ են բոցկլկլում:

Եւ փոթորիկը ձմռան՝ նրանց երգը կրկնելով,
 Մոլեգնում է ու ոռնում, մռնչում է կապաղի,
 Եւ այդ երգը խռոված իր թելերին առնելով՝
 Տարածում է, հասցնում բոլոր ծագերն աշխարհի:
 Չարագուշակ երկինքը ավելի է մթագնում,
 Սասրկանում է գիշերվա սառնամանիքն ավելի,
 Երգի որտան ավելի, ավելի է մոլեգնում,
 Ավելի է բարձրանում փոթորկի ձայնն ամենի:

Եւ խմում են, եւ երգում... Բեկորները այն չնչին՝
 Ոստիներից հալածված քաջակորով մի ազգի,
 Զավակները այն գրկված՝ հայրենիքի իրենց հին,
 Որ ողջակեզն է դարձել անօրինակ սխրանքի:
 Ուրաբոբիկ, վշտաբեկ, պապառուրված շորերով,
 Նայրենիքից անջարված նրանք գինի են խմում,
 Եւ ձգտելով մոռանալ տանջանքները բյուրավոր՝
 Նրանք այնպես են երգում՝ կարծես թե լաց են լինում:

Արվեստի բոլոր մեծ երկերի նման՝ այս բանաստեղծությունը պահպանում է իր արդիական հնչեղությունը՝ որպես եղբայրական բուլղար ժողովրդի մեծ գավակ Պեյո Յավորովի, մեր թանկ հարազատի սրտաբուխ ու բարձրարվեստ խոսք, որ ամեն անգամ հիշում ենք սրտագին երախտագիտությամբ դեպի այն ժողովուրդը, որ դժվար օրերին ապաստան է տվել մեր ժողովրդի ցանուցիւր բեկորներին, ծնել է այն մեծապատանդ բանաստեղծին, որը մեր վիշտը, մեր ողբերգությունը ներկայացրել է աշխարհին՝ եղբոր՝ հարազատի սրտացավությամբ ու պահանջարհրոջ իրավունքով: